

լուսաւորութեամբ տեսնէ ու նանչնայ չարը եւ զգայ անոր կործանարար ազդեցութիւնը: Այդ նանաչումով է միայն որ չարը կը վերացուի եւ կը սրբուի: Ուրեմն, յիմարութիւն է չտեսնել, չզգալ, չխորաչափել չարը իր հեազնութեամբ:

Ճիշդ է՝ «հայ լիները անողո՞ք եւ

հերոսական բան է: Ճակատագիր է եւ պատգամ: Դարերի խորքից եկած հրամայական պատգամ», սակայն շատ աւելի դժուար է ըլլալ մարդ՝ բառիս ամբողջական առումով: Յիշել է պէտք՝ «*Amat Victoria curam*», որ է՝ «Յաղթանակը ջանք կը սիրէ»:

ՋԵՆՈՒ Ա. ՔԷՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԹԷ ՅՈՒԵՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս մասին սկսել եմ մտածել այն պահից, երբ իմ մէջ եւս հարց առաջացաւ որոշակիօրէն կողմնորոշուել դէպի սրանցից մէկը: Երկար մտորումներից յետոյ ինձ համար բացայայտուեց գաղտնիքը, որը հանգստացրեց թափառ մտքերիս յոգնութիւնը եւ ստիպեց ինձ պատմել դրա վերաբերեալ: Ահա հիմա գրասեղանի առջեւ նստած փորձում եմ դրանք սեղմել գրական որեւէ ստեղծագործութեան շրջանակներում, սակայն վստահ եմ, որ ստեղծագործելու սահմանափակ կարողութիւնս չի կարողանալու սանձել մտքերիս վարքը ամենանուրբ գրական ասպարէզներում: Ստիպուած ընտրում եմ «էսսեի» լայն հրապարակը, թէեւ կարծում եմ, որ այնուամենայնիւ անհասկանալի եմ մնալու շատերին, որովհետեւ ինձ հասկանալու համար անհրաժեշտ է մի փոքր ինձ պէս մտածել: Եւ այսպէս մտքերիս կոյտից ընտրում եմ առաջին նախադասութիւնը եւ սկսում:

Ես յոռետես չեմ եւ ոչ էլ լաւատես՝ ըստ այս հասկացութիւնների ըմբռնման դասական իմաստի: Սրանով ոչ թէ ուզում եմ ընդգծել ինքնատիպութիւնս, այլ բացայայտել մարդկանց այն

մեծամասնութիւնը, որի անունը կարելի է որակել յատկապէս յոռետեսական որոշիչներով: Չնայած որ յոռետեսութիւնը միշտ չէ, որ անարժէք է, այնուամենայնիւ իրերը իրենց անուններով կոչելը նախընտրելի է: «Ի՞նչ է լաւատեսութիւնը եւ երբ է այն առաջանում», - թեման վերլուծելուց առաջ անհրաժեշտ է ինքնեքս մեզ հարցնենք: Լաւատեսութիւնը՝ ուրախութեան եւ երջանկութեան յոյսն է, որն ուղեկցում է մարդուն մանաւանդ կեանքի մթին քառուղիներում: Նոյնիսկ երբ կեանքի վերջը կախաղանն է, այն չի դադարում գործելուց եւ մարդուն տալիս է ցաւը յաղթահարելու մտասեւեռում: Այն ծնունդ է մտածումից եւ երջանկութեանը տիրելու կամ այն կորցնելու վախից: Վախ, որը նոյն հեռաւորութեամբ է ընկած լաւատեսութեան եւ յոռետեսութեան միջեւ, սակայն երբ սնունդ է յոռետեսութեան ակունքներից ի վերջոյ թափում է տիրութեան ովկէանոսը, ամէն մի մտածում, յոյս ու երազ ընկուզելով նրա անթափանց ջրերում: Ահա այստեղ՝ կեանքի ու կենսակերպի լաբիրինթոսում, որտեղ ելքի ընտրութիւնը միանգամայն պարզ է բուււմ, մեզ մօտ առաջանում է

յաջորդ հարցը, թե արդեօք գերադասելի⁶ է ողջ կեանքի կամ ընդհանրապես կեանքի բոլոր վայրկեանների համար, իրրեւ նշգրիտ կողմնացոյց ընտրել դրանցից մէկը կամ միւսը: Հարցի որեւէ կմկմացող պատասխան՝ աւելի վախի, քան տգիտութեան արդիւնք է, քանի որ հարցն առընչում է մեր սեփական եւ հարազատ երջանկութեանը: Սակայն սա չէ էականը, որի վրայ կ'ուզենայի կենտրոնանալ: Սա միայն հարցի երեսն է, որի պատասխանով գոհանալը հաւասար է խմորի արտաքին շերտը այրելով հաց ստանալու, ինչը տուեալ դէպքում չպիտի յագեցնէր մեր մարմնական պահանջը: Այնինչ՝ հարցի լուծումը կարելի է գտնել համադրման եղանակով, ինչպիսին հենց խմորն ու աղն են: Որքան էլ լաւատեսութիւնը օժտուած լինի դրական լիցքերով, այնուամենայնիւ հարցական է, թե դրանք ի՞նչ հաղորդակցութեան մէջ կը պահեն մեզ երջանկութեան հետ: Ես մի դասախօս ունեմ, որ մի անգամ «Ահեղ Դատաստանի» մասին խօսելիս ասաց, թէ պէտք է երկնչել դրանից, այլ առաւել պէտք է մտածել Աստուծոյ ողորմութեան, քան արդարութեան եւ պատժի մասին: Ահա այստեղ է, որ կարծում եմ, թէ բացարձակ լաւատեսութեան նանապարհը կեանքի նոյն լարիքինքոսում անընկատ միանում է անհոգութեան մայրուղուն: Նոյն բանը

կարելի է ասել ծայր յոռետեսութեան մասին, որի ընթացքը մեզ կարող է հասցնել մինչեւ յուսահատութեան անդունդը: Արդեօք բացառուած է դրանց տարրերի փոխ-թափանցումը, նոր արահետների միջոցով դրանց փոխ-կապակցութիւնը այնքանով, որքանով հնարաւոր կը դառնայ վտանգի միանգամայն սրափ գիտակցութիւնը, ապագայի եւ իրավիճակի նշգրիտ գնահատումը: Իւրաքանչիւր մահացած հերոսի մտքում անկասկած եղել է մահուան գիտակցութիւնը սակայն անմահութեան գլխաւոր գաղափարն իր մէջ է ծծել նրա յոռետեսութիւնը, եւ միայն համեմուել է նրանով: Եւ ի՞նչն է այստեղ ամենահետաքրքրականը, եթէ ոչ այն՝ որ յոռետեսութեան զէնքերով կարելի է պայքարել ընդդէմ հենց իրեն՝ յանուն բարի ապագայի: Մտացածին հնչող այս գաղափարը մասնաւորելու համար այն թերեւս կարելի է համեմատել կշեռքի հետ, որի մի նժարին լաւատեսութեան կշռաբարն է, իսկ միւսին՝ յոռետեսութեանը, միայն այն տարրերութեամբ՝ որ վերջինս լոկ ձեւով է նման առաջինին, այնինչ դատողութեան եւ կարծիքի կշիռը պայմանաւորուած է մեր սրափ գիտակցութեամբ, ինչն էլ ձգտում է հաւասարակշռութեան եւ ներդաշնակութեան մէջ պահել մեր կեանքը, մեր երջանկութիւնը:

ՍԱՄՈՒԷԼ ՍՐԿ. ՍԱՖԱՐԵԱՆ